

Արձանագրություն թիվ 4

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2019թ նոյեմբերի 19-ին

Օրակարգը՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր

1.Խորհրդի նախագահ, դեկան Ս.Վ.Ղուչիկյան – Սկսենք այսօրվա գիտխորհրդի նիստը՝ օրակարգի առաջին հարցը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների վերնագրերի հաստատումն է: Քննարկումները բնականաբար անցել են ամբիոնի նիստերում, մենք այստեղ հաստատելու ենք: Ամբիոնի վարիչները ներկայացնեն ընդհանուր վիճակը:

Ն.Ա.Դուրգարյան(օրգանականքիմիայի ամբիոնի վարիչ) – ամբիոնում արդեն հաստատվել են թեմաների վերնագրերը և դեկավարները, ավարտական և մագիստրոսական աշխատանքներն ընթացքի մեջ են, սակայն խնդիրներ կան Ֆարմացիայի ինստիտուտի հետ: 2-մագիստրոս չի ներկայացել, և 3 ուսանող 4-րդ կուրսից: Այդ մասին ինստիտուտում տեղյակ են:

Շ.Ա.Մարգարյան(Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ)- Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերի թեմաները քննարկված և հաստատված են, և աշխատանքներն ընթանում են նորմալ հունով:

Ա.Ի.Մարտիրոսյան (անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ)- մեր ամբիոնում նույնպես կան թափուր տեղեր, որը պայմանավորված է ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների բացակայությամբ: Չնայած այդ հանգամանքին մեր ամբիոնում աշխատանքների թեմաները քննարկված են:

2. Ս.Վ.Ղուչիկյան - Օրակարգի երկրորդ հարցը կուրսային աշխատանքներն են և դրանց ընթացքը: Ինչպես է կազմակերպվում գործընթացը: Կուրսային աշխատանքների ցուցադրական պաշտպանությունը պետք է կազմակերպվի ստուգարքների հետ միաժամանակ, քանզի ուսանողները մինչև դեկտեմբերի 22-ը պրակտիկայի են:

Ամբիոնի վարիչները նշեցին, որ աշխատանքները ընթանում են նորմալ հունով, այդ աշխատանքները հանդիսանում են ավարտական աշխատանքների գրական ակնարկը և ըստ ժամանակացույցի կներկայացվեն պաշտպանության:

3. Դեկան Տ.Վ.Ղուչիկյան- այժմ լսենք անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Բ.Մարտիրյանի՝ առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:

Ա.Բ.Մարտիրյան- այս տարվա ուսանողները բավականին լավ ուսանողներ են, հետաքրքրված են առարկայով և ամենակարևորը նպատակասլաց են: Ուսանողները բավականին ակտիվ են մասնագիտական ոլորտում և հասարակական գործունեության մեջ: Նրանց հետ նաև աշխատում են ՈւԽ և ՈւԳԸ անդամները: Մակայն ունենք ինդիք՝ տղաների հարցը: Բավականին շատ են ընդունված տղաները, որոնք զորակոչվելու են, արդեն սկսվել է այդ գործընթացը և տղաների մոտ բացակայությունները քանակը շատ է: Կարծում եմ պետք է ըմբռնումով մոտենալ այդ հարցին:

4. Տ.Վ.Ղուչիկյան- Ընթացիկ հարցերը բավականին շատ են: Սկզբում եմ ուզում եմ անդրադառնալ մեր ուսանողների կողմից կազմակերպած “Էքսպո”-ին, որը ոչ միայն լավ արձագանք գտավ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձակազմի, ռեկտորատի մոտ, այլ նաև ցույց տվեց մեր ուսանողների սերը առարկայի և աշխատանքի նկատմամբ: Այդ աշխատանքում ներգրավված էին ֆակուլտետի բոլոր կուրսերից: Պետք է նման աշխատանքերը խրախուսվեն և ավելի հետաքրքիր լինեն:

Ռեկտորատից մի քանի ծանուցումներ են ստացվել ներկայացնել դրանք:

1. “Դասավանդի՛ր, Հայաստան” Առաջնորդության զարգացման ծրագիր. Այս ծրագրին կարող են մասնակցել ֆակուլտետի ուսանողները՝ բակալավր և մագիստրոս և հնարավորություն ստանան մարզերում դասավանդել քիմիա առարկան: Այս ծրագիրը մեծ հնարավորություններ է ընձեռում, պետք է տարածել ուսանողների շրջանում:
 - Շուշաննա Վարդանյան ՈԻԽ-ի նախագահ: Այս ծրագրին ես ծանոթ եմ և արդեն հայտ եմ ներկայացրել մասնակցելու, պետք է հանդիպել, ծանոթանալ պայմաններին և հնարավորություններին:
2. “Էռզամուս+ հիմնական գործողություն 1-ի” շրջանակներում դասավանդման և վերապատրաստման մասին է: Կայքի էլեկտրոնային հասցեն կտրվեն և՛ ՈւԽ-ին և ամբոինների վարիչներին ամբիոններում ներկայացնելու համար:
3. Պրոռեկտոր Ասրիյանի կողմից ստացված շրջաբերականն է 2019/2020 ուս տարում, մարտի 24-26-ը կազմակերպվող էքսպո-ի մասին “ԵՊՀ-ն այսօր” խորագրով: Կարծում եմ մեր ուսանողները արդեն իսկ փորձ ունեն: Այս միջոցառմանը պետք է մասնակցեն ինչպես ուսանողները, այնպես էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Էքսպոն նվիրված է Մայր բուհ-ի 100-ամյակին:
4. Երկրորդ շրջաբերականն վերաբերվում է ռազմավարական նպատակների իրականացման անհրաժեշտությանը: Ծրագրերը երկուսն են՝ “Որակյալ կրթություն” և “որակյալ մարդկային ռեսուրսներ”: Պիլոտային ծրագրին մասնակցելու համար պետք է դիմել 3-օրվա ընթացքում:

Ընթացիկ հարցեր ֆակուլտետի գիտխորհուրդ է ներկայացված 2 ուսումնամեթոդական ձեռնարկ և հեռակա ասպիրանտ Մարիետա Զաքարյան ատեստավորման հարցը:

1. Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի “Սննդարտադրական տեխնոլոգիաներ” ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

Խորհրդի նախագահ, ք.գ.դ., պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյանը նշեց, որ պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի “Սննդարտադրական տեխնոլոգիաներ” ուսումնական ձեռնարկը ենթարկվել է գրախոսման ամբիոնում և տրվել արտաքին գրախոսման: Գրախոսներ՝ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ Հ.Ռ.Սարգսյանը, “Նարեկ” գիտահետազոտական ՓԲԸ աշխատակիցներ Ծ.Բիլյանը և Ա. Դայանը կարևորելով ձեռնարկի արժեքը և մայրենի լեզվով ձեռնարկների հրատարակման անհրաժեշտությունը և այն երաշխավորել են տպագրության:

Որոշեցին – Հաշվի առնելով Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի միջնորդությունը և գրախոսների դրական կարծիքը խորհուրդը միաձայն որոշեց պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի “Սննդարտադրական տեխնոլոգիաներ” ուսումնական ձեռնարկը թույլատրել տպագրության:

2. Լսեցին – Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ Լ.Ս.Գաբրիելյանի, դոցենտ Ա.Գ.Խաչատրյանի և պրոֆեսոր Շ.Ա.Սարգսյանի „Ֆիզիկական քիմիայի խնդիրների ժողովածու” վերնագրով ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

Խորհրդի նախագահ, ք.գ.դ., պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյանը նշեց, որ Լ.Ս.Գաբրիելյանի, Ա.Գ.Խաչատրյանի, Շ.Ա.Սարգսյանի „Ֆիզիկական քիմիայի խնդիրների ժողովածու” վերնագրով ուսումնական ձեռնարկը ենթարկվել է գրախոսման ամբիոնում: Գրախոս՝ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ Գ.Ս.Գրիգորյանը՝ կարևորելով ձեռնարկի արժեքը ոչ միայն ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ուսանողների համար, այլև այլ բուհերի համապատասխան մասնագիտությամբ ուսանողների, ավագ դպրոցի և քիմիայի օլիմպիադաներին նախապատրաստվող աշակերտների համար:

Որոշեցին – Հաշվի առնելով Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի միջնորդությունը և գրախոսի դրական կարծիքը՝ գիտական խորհուրդը միաձայն որոշեց տալ վերոհիշյալ աշխատանքը արտաքին գրախոսման Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ:

3. Լսեցին – Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիետա Կարենի Զաքարյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյանը նշեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքները ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Հաշվետու ժամանակահատվածում Մ. Զաքարյանը իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ կատարված աշխատանքների

հիման վրա տպագրվել է 3 գիտական հոդված, 3 թեզիս: Նա մասնակցել է 2 միջազգային գիտաժողովի, որոնցից մեկում հանդես է եկել բանավոր զեկուցմամբ: Հանձնել է գերազանցությամբ 2 մասնագիտական քննությունները և հավաքել է 7 կրեդիտ: Հաշվետու տարում հանդիսացել է ասպիրանտական դրամաշնորհի դեկավար: Մարիետա Կարենի Ջաքարյանը նույն ժամանակահատվածում երկամսյա գործուղման է եղել ԱՄՆ-ի Նոտր Դամի համալսարանում:

Որոշեցին – Հաշվի առնելով անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դրական կարծիքը, ինչպես նաև ասպիրանտի կատարած աշխատանքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց ատեստավորել ասպրանտ Մ. Կ. Ջաքարյանին:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտ. քարտուղար, դոցենտ՝

Մ.Ա.Սամվելյան